

Մ Ո Ւ Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԳԷՍ ՇԱՔԱԹԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Թիւ 2

1888 թ.

Օգոստոս 6

ԱԶԳԱՅԻՆ

Յուլիս 27 ին Կրօնական եւ Քաղաքական ժողովոյ գումարումէն յետոյ իսառն ժողովն ի նիստ գումարեցաւ ի Ղալաթիա, ընդ նախագահութեամբ Պատրիարքական Գեր. Տեղապահ Տ. Սիմէոն Սրբազան Հօր. եւ յետ խորհրդակցութեան ընդ Մայր դիւանի Ազգ. Երեսփոխանական ժողովոյ, կազմեց մի Յանձնաժողով, պաշտօն տալով նմա, խմբագրել մի պատասխան այն քեզիքիսին, զոր Դատական եւ Կրօնական գործոց նախարարութիւնն ուղղած էր առ Գեր. Սրբազան Տեղապահն ի մասին Երեսփոխանական ընտրութեան՝ ըստ տրամադրութեան Ազգ. Սահմանադրութեան, եւ Ազգ. ժողովոյ ներքին Կանոնադրոյ ինչ ինչ յօդուածոց, որք հակառակ կը թուին Ազգ. Սահմանադրութեան հիմնական տրամադրութեանց։ Այս հինգշաբթի օր իսառն ժողովն սոյն թէզքէրէի պատասխանագիրը պատրաստեց։ Եւ միանգամայն ՚ի նկատ առաւ Առաջն. վերականգնութեան Յանձնաժողովոյ պատրաստած ծրագիրը։

Ժողովն Տիգրանակերտի առաջնորդ կարգեց Տ. Գրիգորիս եպիսկոպոս Ալէաթճեան, որ ի վան երբեմն Պատ. փոխանորդ ։

Եօզղատի Առաջնորդական տեղապահ կարգեց Սոյ միաբաններէն Տ. Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեան եւ հրաւիրեց ի մօտոյ մեկնիլ մայրաքաղաքէս ։

Քէօթահեայի հետ վերստին միացեալ հրատարակեց Աֆիոն Գարահիսար եւ Ագչէհիւ գաւառակներն, որոյ առաջինը բաժնուիլ եւ առանձին առաջնորդութիւն ունենալ կը ձկտէր, իսկ երկրորդն վերջերս Պիլէճիկի հետ միացած էր ։

Վ Ա Ր Դ Ա Վ Ա Ռ

Ե Ի

ՄՇՈՅ ՄՈՒՐԱՏԱՏՈՒՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ

Եկեղեցին տօնեց ՎԱՐԴԱՎԱՌը ։ Զկայ աշխարհիս մէջ տօն մը, որ հնագոյն լինի մեր վարդապառէն ։ Զորս հինգ հազար տարուան տօն է այս ։ Եւ որ հաւանականն է, նոյնահասկետէն հաստատուած, ոչ կռապաշտութիւն եւ ոչ քրիստոնէութիւն կրցին այս տօնը ջնջել ։ Համայն Հայաստանեայք հազարաւոր տարիներէ ի վեր կը տօնեն վարդապառը ։ Ամէն ատեն նոյն իսկ ազնուականներ ռամիկ Հայուն հետ վարդով պսակուեցան, պսակեցին այսօր բազմիներ կամ տաճարներ, ասոր համար այս տօն կոչուեցաւ ՎԱՐԴԱՎԱՌ ։ Հայք ջրեր սրսկեցին իրարու վրայ, կամ Եփրատայ մէջ լողացին ։ աղաւնիներ թռուցին, զոհերով եւ մատաղներով ցնծացան յանուն վարդապառի, Այն օրէն ի վեր, յորում Աստուած

Արարատայ սարէն օրհնեց մարդկութիւնը, այն օրէն ի վեր, յորում Աստուած իւր ծերանի գօտին կապեց Մասիսի սարէն յԱրագած, այն օրէն ի վեր, յորում ծերունին Նոյ, բազկատարած զոհեց Աստուծոյ, եւ Աստուածային օրհնութիւն մաղթեց Հայոց աշխարհի եւ համայն մարդկութեան համար, այն օրէն ի վեր վարդավառը Հայք տօնեցին: Վարդավառի անունով, ամէն տեղ աշխարհիս մէջ, Հայոց սրտեր տրոփեցին, Ո՛ր լուսաղբիւրք եւ կաթնաղբիւրք, ո՞վ ականակիտ աղբիւրիկներ, ձեր վճիտ կաթիլներ, որք վէտ ի վէտ կը կաթկըթին, ձեր վճիտ կաթիլներ, այժ, առ այս կը վկայեն:

Հնումն այս աշխարհախումբ տօնի օրն՝ էր Նաւասարդի առաջին օրը, Նաւասարդ. ինչ սիրուն եւ սրտայոյզ անուն. Նաւասարդ, Հայոց ամանորը — տարւոյն առաջին օրը, Հայք վարդավառը կը տօնէին: Եւ ո՞ր Հայն այսպիսի օր մը չէր խայտար կաթողին: Նոյն իսկ յաղթողն Ալանաց՝ մեծն Արտաշէս իւր մահուան անկողնին մէջ հառաջելով կը հեծեծէր. «Ո՛ր տայր ինձ զծուխ ծխանի, եւ զառաւօտն Նաւասարդի, զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց. — մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք»:

Ո՞ր Մշեցի Հայն այսօր չգիտէր թէ Մշոյ դաշտը, որ շատ անգամ մշուշով կը ծածկուի, ուրիշ բանէ չէ, եթէ ոչ Նոյի աղջիկն Աստղիկ որովհետեւ այգուն այգուն Եփրատայ գոռը կը մտնէ, լուացուելու համար, ի ծածկոյթ իւր մերկութեան, մշուշով կը ծածկէ դաշտը: Կը պատմուի թէ առաջին անգամ Աստղկայ ի լոգարան մտած ատեն սիրահար աշուղ մը երգած լինի, եւ այնքան զմայլագին երկար կերգէ, որ ի լուր ձայնին Հայ պատանիներ ու աղջիկներ լոյս առնելով եւ խարոյկ վառելով, ի տես գեղեցկութեան Աստղկայ կը փութան: Աստղիկ ամօթահար կստիպուի մշուշ բերել երկնքէն, եւ զինքը ծածկել հետաքրքիր աչերէ: Մինչեւ ցարդ կայ սոյն հագներգը.

«Մշոյ սարերն մշուշ է,

իւր հողն ու ջուր անուշ է»:

Իսկ հայկական տաղերգութիւնն անմասն չմնաց այդ տաղերգէն ու աւանդութենէն, ուստի կցեց.

« Մշուշ է Մշոյ սարեր ,
Աստղիկիս միայն ի սէր .
Աստղիկիս ,
Իմ սրտիս » :

Վարդավառի այս հեթանոսական տօնը նուիրագործեց Ս . Գրիգոր Լուսաւորիչ , որ քրմութեան դէմ ի Տարոն ահագին մի պատերազմ մղելէ յետոյ՝ Ս . Խաչին յաղթական դրօշը Ողական բերդին վրայէն ծածանեց առաջին անգամ . եւ ապա երբ Ս . Կարապետի նշխարները որ կը բերէր Կեսարիայէն սայլի վրայ դրած յետիրատ սկսաւ յառաջանալ , տեսնելով թէ եղներ յանկարծ կանգ առին եւ այլ եւս չեն յառաջանար , անմիջապէս կործանելով այն մեհեանն ու բազին , որք նուիրեալ էին յանուն Հայոց հին աստուածներուն , հոն տեղաւորեց Ս . Կարապետը , եւ տօն սահմանեց , որ այլ եւս Վարդավառն ու Վահեվանեան տօնն Հայք հոն կատարեն : Ո՛վ իննականց աղբերակներ , քանի՛ քանի՛ անգամ ուխտաւոր Հայ սրտեր ձեր սուրբ ջրով զովացան եւ զուարճացան : Մամիկոնեան նախարարներ եւ սեպուհներ քանի՛ քանի՛ անգամ իրենց խոնջէնքն առին , կախելով իրենց ծակծկած ասպարն ու վահանն այն ծառոց ճիւղերէն , որ կը հովանաւորեն զձեզ : Վարդավառի տօնը Ս . Գրիգոր Լուսաւորիչ Տեառն մերոյ Պայծառակերպութեան տօնին վերածելով , հին աւանդական տօնն եւս անխափան թողուց , ի յիշատակ այն մեծ դէպքին որ կատարուած էր ի մէջ Աստուծոյ եւ մարդկութեան , այն է ջրհեղեղին , եւ ասոր համար է որ Հայք իրարու վրայ ջուր կը սրսկեն այսօր :

Որքան Վարդավառը Ս . Լուսաւորչէն հանդիսապէս տօնեցաւ , այլ սակայն եկեղեցական քնարն անմասն չմնաց գովաբանելէ այն կարմիր վարդն , որոյ կոկոնէն գուրս ծլեցաւ ծաղկեցաւ աշխարհի փրկութեան արեւն , որ աստուածահրաշտեսեամբ փայլեցաւ ի Թափոր : Քրիստոսն էր այդ արեւը եւ վարդն՝ Աստուածածին սուրբ Կոյսը , Հազար տարիներէ աւելի է որ Հայաստանեայց եկեղեցին իւր այս Շարականը կեղանակէ , եւ Վարդավառի օրն ի Ճաշուի Ս . Պատարագին մէջ կը գեղգեղէ :

«Ուրախացիր պսակ կուսից, Տիրամայր, այսօր Որդին քո զհայրենի փայլեաց զփառս, նմա յաւերժ յանձն արա զանձինս մեր: Նմա Մովսէս եւ Եղիաս սպասեն յանուն նորա, ցնծան Թափոր եւ Հերմոն: Նմա յաւերժ յանձն արա զանձինս մեր:

Եսայիաս զքեզ թեթեւ ամպ ետես, եւ Հայր յամպոյ զքո Որդին՝ իւր դաւանեաց: Նմա յաւերժ յանձն արա զանձինս մեր:

Հայկական հանճարն, որ այս անգամ ի հանդէս կելնէ, թէեւ Քրիստոնեայ հանճար, այլ սակայն Հայկական հեթանոսութեան քնարէն չուզէր զատուիլ: ԼՈՅՍը, ՀՈՒՐը՝ կրակն ու ձԱՌԱԳԱՅԹն, որք սիրելի եւ պաշտելի էին հին Հայոց, Քրիստոնեայ գրչին չնորհիւ վերստին կեանք եւ ոգի կառնուն եւ ի ձայն աղօթաւոր բերաններու կողորտանան խաչապսակ տաճարներու կամարաց տակ: Աւասիկ դարձեալ Շարականն. « ձԱՌԱԳԱՅԹ փառաց Հօր Որդիդ միածին, որ զԼՈՅՍդ անվայրափակ մարմնով պարագրեալ, այսօր ի Թափոր փառօք փայլեցեր: Որ անտես սերովբէիցդ անհաս, ի ի վեր քան զբան, ծառայի կերպիւ պարածածկեալ զլոյսդ անսառներ, այսօր ի Թափոր փառօք փայլեցեր:

Որ հրեղինացն անմերձանալի ՀՈՒՐ աստուածութեանդ ի հովեղէնս խոնարհեալ լոյսդ արփիական, այսօր ի Թափոր փառօք փայլեցեր »:

Յետոյ միեւնոյն գրիչը կը յիշատակէ թէ նա՝ Փրկիչը, որ ի սկզբան Ադամը փառօք զարդարեց, եւ այդ փառքը Ադամէն կապտեցաւ, երբ առաջին Մեղքը գործեց, այսօր վերստին փառօք զարդարեց. զով. — մարդը: Նա որ ընդ ամպս երեւեցաւ Մովսէսի ի Սինա, այսօր ի Թափոր ընդ լուսափայլ ամպս երեւելով, կը վկայէ. « Դա է իմ Որդի, Դա լուարուք »: Նա որ յերկինս ի վեր՝ առաւ Եղիան հրեղէն կառօք, այսօր զնա Մովսէսի հետ ի միասին վայրաբերելով, կը խօսի այն բաներուն վրայօք, զորս պիտի կրէր ինք Փրկիչն աշխարհի յերուսաղէմ:

Այլ ո՞վ է այս քաղցրաձայնիկ Սոխակը, այն անուշիկ Պլպուլը, որ Վարդավառի այսքան սիրահար, այսքան խանդակաթ, այսքան կաթողին կը դայլայլէ. — սա մեծ հան-

ճարն է Հայոց, ազգային պատմութեան կեանքն ու հոգին, քերթողահայր մեծն ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, որ չարաչար հալածեցաւ, այլ սակայն գրեց. տառապեցաւ, այլ սակայն երգեց. խեղճօրէն մեռաւ, այլ սակայն անմահացաւ: Նախանձոտներու կատաղութիւնը չկշտացաւ այս պատուական տն. ձին կենդանութեան ատեն, այլ տեւեց նորա գերեզմանին վրայ եւս, զոր քանդեցին նախանձոտք եւ ոսկորներն այն մարդուն, որ Հայոց լոյս ու կեանք տուած էր, այն մարդուն ոսկորներն անօրէն ձեռօք պղծելով յեփրատ թափեցին . . . ո՛վ մարդկային կրից կատաղութիւն:

Հայք ամէն ատեն եւ ամէն տեղ տօնեցին Վարդավառը մանաւանդ ի Տարօն: Հոն մուրաճատուր Ս. Կարապետի հռչակաւոր վանքի մէջ չքեղ կը տօնուի Վարդավառը: Մատաղցու եզներ, նշխուն եւ գոյնզգոյն, կը մորթուին: Հայք կը խայտան, կը ցնծան, զի Վարդավառ է: Հոն ուխտաւորք ծունր կը դնեն այն շիրմին վրայ, ուր հանգչած կան առիւծն վահան, գոռն Սմբատ եւ աղու աղաւնին Տիրան: Հոն ուխտաւորն Սուրբ Կարապետէն կառնու իւր սրտին մուրատը: Հոն հեռաւոր եւ մերձաւոր Հայք իրարու կը փարին, իրար կողջագոյրեն մրմնջելով. « Լուսաղբար եմք »:



Տ Ա Պ Ա Ն Ա Կ

Ո Ի Խ Տ Ի Ն Ա Ս Տ Ո Ի Ծ Ո Յ

Տապանակն էր փայտաշէն, այլ ոսկիապատ արկղիկ, զոր Մովսէս շինեց հոն պահպանելու համար Տասնարանեայ աստուածագիր տախտակներն, որք ի վկայութիւն ուխտին Աստուծոյ ընդ իւր ժողովրդեան, աւանդ մնացին: Այդ Տապանակին մէջ նաեւ դրաւ Մովսէս Ահարոնի գաւազանը, որ զարմանահրաշ տեսեամբ ծաղկեցաւ ի կորանս նոցա, որք կը հակառակէին ընդդէմ քահանայապետութեանն Ահարոնի:

Նոյնպէս Մովսէս հոն դրաւ անապատին մէջ տեղացող Մանանայէն մաս մը, ոսկեղէն սափորով: Այս Մանանայ էր տեսակ մը կերակուր, զոր Աստուած Իսրայէլի շնորհեց քառասուն տարի ամէն առաւօտ, որչալուսի ցօղին հետ, այնպէս որ անապատին մէջ բազմահոծ մի ժողովուրդ բնաւ հացի կարօտութիւն չքաշեց: Երբ Մանանայն առաջին անգամ երկնքէն տեղաց, Իսրայէլացիք ապշած ու հիացած սկսան հծծել իրարու. մտն հոռ, այսինքն լինէ այս: Մանանայն ոչ թէ ծառերէ եւ թօփերէ կը ծորէր, այլ երկնքէն կիջնէր եւ այնքան կարծր, որ ժողովուրդը կստիպուէր ազալ եւ խորովել իբր ցորէն: Հրաշալի էր, զի մինչ ուրիշ օրերու մէջ եթէ յաջորդ օրուան համար պահուէր, կորդնաւէր, ուրբաթ օր հաւաքուած մանանայն ԱՆԱՊԱԿԱՆ կը մնայր չարաթ օրը, որով Աստուած կը հաստատէր չարաթ օրուան սրբութիւնն՝ իբրեւ օր հանգստեան, հաստատուած ի սկզբանէ անտի աշխարհի: Մանանայն եւս կը կոչուի «Հրեշտակներու հաց, երկնքի ցորէն»: Սաղմ. ՀԸ. 24—25: Մանանայէն մաս մը ոսկեղէն ամանի մէջ ի Տապանակի դըրուելը ու անապական մնալը վկայութիւն էր այն յաւիտենական հացին, զոր Բրիստոս պիտի շնորհէր իւր Եկեղեցւոյն, վասն զի եթէ Մանանայն, որ ինքնին ապականացու նիւթ էր, Տապանակին մէջ ԱՆԱՊԱԿԱՆ մնաց, հապա սրբան եւ այն հացն ու գինին, որք կը պատարագուին յանուն փրկչին իբրեւ մարմին եւ արիւն նորա, անապական են եւ կը շնորհեն անապական կեանք ճշմարիտ հաւատացեցող. Եբր. Թ. 4. Յովհ. 2. 50—58: Յայտ. Բ. 17:

Այս տապանակին մէջ էր եւ Մովսէսի հնգամատեանն, զոր յետ ժամանակաց բարեպաշտ արքայն Յովսիա ի լուր ժողովրդեան, լալով ընթեռնելով վերստին հրատարակեց ճշմարիտ աստուածալալութեան կրօնն անդ ի Պաղեստին: Տապանակը կը ծածկէին երկու ոսկեճոյլ քերովբէներ, թեւապարփակ, գէմք ի խոնարհ, թեւք խաչաձեւ ունելով, եւ ի ՔԱՆՈՒՄԻՆԻՆ նայելով: Աստ կը բնակէր Աստուած, եւ իւր պառգամներն աստի կը լսուէին: Աստ քահանայապետը տարեկան մեծ զոհը, քառութեան պատարագը կը մատուցանէր,

մտնելով ի ՍՐՐՈՒԹԻԻՆՆ ՍՐՐՈՒԹԵԱՆՑ, Բոլոր Հրէից համար, Տապանակն էր նուիրական եւ սրբազան աւանդ, մինչ զի տաճարի երկրորդ շինութենէն յետոյ լացին Հրեայք անմխիթար սգով, վասն զի նորաչէն փառաւոր տաճարին մէջ բան մը կը պահուէր. — Տապանակը, զոր Երեմիա, ինչպէս կ'աւանդուի, Երուսաղէմի առաջին անգամ կործանուած ատեն, գաղտ տարած պահած էր հեթանոսական պղծութենէ ազատելու համար, եւ մնաց այնուհետեւ անյայտ:

Տապանակն էր Իսրայէլի առաջնորդն անդ յանապատի: Պատկառեցաւ Յորդանան Տապանակէն, եւ ժողովուրդն գետին մէջէն հետի անցաւ, ալ ի բերան ապշելով Աստուծոյ Տապանակին այս հրաշալի զօրութեան վրայ: Երիքովի պարիսպներն իսկոյն մոմի պէս հալեցան Տապանակին առջեւէն, երբ վեց օր, եօթն քահանայք Տապանակը առնելով ըստ հրամանի Յեսուայ՝ յաջորդին Մովսիսի Երիքովը շուրջը պատեցան փող ի բերան եօթներորդ օրը երբ վերջին անգամ քահանայից փողը հնչեցին, կործանեցաւ ինքնին Երիքով եւ այսպէս Տապանակին փառքն անդէն իսկ կրկին գեր ի վեր հանդիսացաւ յաջս Իսրայելի: Հրէից Պաղեստինի մէջ հաստատութենէն յետոյ՝ Տապանակը նախ ի Գաղղաղա եւ ապա ի Սելով մնաց:

Բայց Տէր Աստուած ցոյց տալու համար թէ ժողովուրդ մի որ արժանի է արդար պատժոյ, չկրնար ազատուիլ այս կամ այն նուիրական բաներու ապաւինելով, պատժեց այն Իսրայելացիներն, որք Տապանակն առնելով փշտացուոյ դէմ պատերազմեցան եւ չարաչար յաղթուեցան: Հեղի քահանայապետ լսելով թէ իւր երկու զւակներն այս պատերազմին մէջ մեռած են եւ թէ նոցա հետ 30000 Իսրայելացի, եւ թէ մանաւանդ Տապանակը գերի ընկած է հեթանոսաց ձեռքը, առ վշտին աթոռէն վար գլորելով կը մեռնի: Այլ սակայն հեթանոսաց վրայ եւս կը ծանրանայ Աստուծոյ ձեռքըն, որք Տապանակը գերի տարած էին, ուստի սքաւ կըստիպուին Տապանակը սալի մը վրայ դնելով եւ երկու անգրանիկ եւ անգաւակ երինջներ լծելով, փորձել, թէ՛ եթէ երինջը ուղղակի Իսրայելի սահմանէն ներս մտնեն, ուրեմն

այն պատիժք զոր կրեցին եւ կը կրէին տակաւին, Տապանակի գերութեան երեսէն է, ապա թէ ոչ խաբուած են : Երինջք կը մոնեն ի Բեթսամիւս, ուր Հրեայք կը դիմաւորեն Տապանակին անհնարին խնդութեամբ, այլ սակայն որովհետեւ շատեր անպատկառ հետաքրքրութեամբ Տապանակը կը դիտեն, կը բարկանայ Տէր եւ 50000 Իսրայելացիներ չարաչար կը մեռնին մինչ զի կաղաղակէ ժողովուրդն. «Ո՛վ կարէ չըջիլ առաջի տեառն Աստուծոյ սրբոյս այսորիկ» : Ապա Տապանակը կը տարուի ի Կարիաթարիմ, եւ անտի մեծաւ պատուով Դաւթի ձեռամբ կը բերուի ապա ի Սիոն : 7000 երիտասարդներ եւս, որք ընկերացան Դաւթի, քնարք, սրինգներ, թմբուկներ, ծնծղայք եւ փողեր անդադար կը հնչէին ի պատիւ երեսայ Տեառն զօրութեանց : Մեծ էր ժողովրդեան ուրախութիւնն, այլ սակայն այդ ուրախութիւն գրեթէ տրոմութեան փոխուեցաւ, երբ Ողա քահանայ, տեսնելով թէ Տապանակին սայլին լծուող եղներէն մին գլխեցաւ եւ Տապանակը կտկտի ծռիլ, կերկարէ իւր ձեռքը Տապանակը շտկելու եւ գլտորելու վտանգին առաջն առնելոյ համար : Տէրն Ողայի այս գործն յանդգնութիւն համարելով իսկոյն յանկարծամահ կը սատակէ : Քիչ ժամանակէն վերջապէս Սողոմոն աւելի եւս մեծ հանդիսիւ Տապանակը կը բերէ եւ կը զետեղէ այն տաճարին մէջ, զոր շինած էր, եւ Տապանակն անդ մնաց մինչեւ ցաւեր Երուսաղէմի յԱսորւոց :

Տապանակին հետ կը տօնուի նոր Եկեղեցին, եւ է նաւահատիք, վասն զի մեր Փրկիչն Պետրոս առաքելոյ այն յայտարարութեան վրայ թէ «Դու ես Քրիստոսն, որդի Աստուծոյ», հիմնեց իւր Եկեղեցին եւ շէշտեց թէ «Դրունք գժոխոց զնա մի յաղթահարեսցեն» : Վարդապառի Կիւրակէ օրը, Հայաստանեայց Եկեղեցին ոչ թէ միայն սոյն Աւետարանն, այլ Տեառն մերոյ Պայծառակերպութեան Աւետարանն եւս ընթեռնելով կը յորդորէ իւր հաւատացեալներն բարի գործերով փայլիլ, յիշելով տէրունի Բանն. «Ձինչ օգտիցի մարդ, եթէ աշխարհս ամենայն չահեսցի, եւ զանձն իւր տուժեսցէ» :



ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

«Եւ ասաց Աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան» :

Ըստ Ս. Գրոց բոլոր արարածներէն յետոյ կատեղծուի ՄԱՐԴը. եւ շատ ճշմարիտ է մեկնութիւնն Եփրեմի իլուրին Ասորւոյ, թէ մարդն ամենէն յետոյ ստեղծուեցաւ, որպէսզի օր մը չյաւակնի պարծիլ թէ ինքն եւս զործօն մասն ունեցած է աստուածային արարչագործութեան մէջ. «Զկնի ամենեցուն արար զնա, զի մի կարծիցէ մարդն թէ իւր իցէ արարչութիւնն» :

Այս անգամ տէր Աստուած «Արասցուք», ստեղծենք մարդը կըսէ. եղակի չխօսիր, կարծես թէ խորհրդակիցներ ունի իւր քով. Աստուծոյ յանկարծ այս կերպ այսինքն յոգնակի խօսիւն, եւ այն եւս մարդն ստեղծած ատեն, նոյն իսկ մարդուն ցոյց տալ էր, թէ ինքն Աստուած որքան մի է, ունի երկու անձնաւորութիւնք եւս, որոց անմեկին միութիւնն է ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ. Աստուծոյ մարդն ստեղծած ատեն յոգնակի խօսելուն մէջ աւասիկ այս խորհուրդը կար, զոր հին Իսրայէլն չկրցաւ ըմբռնել, այլ սակայն նոր Իսրայէլ-Քրիստոնեայ եկեղեցին կարողացաւ իմանալ եւ հաւատալ թէ մի է Աստուած, եւ թէ Հայր, Որդի եւ Հոգի՝ երեքինս մի են :

Նոյն իսկ Թալմուտի մէջ կայ այս մասին մի զարմանալի աւանդութիւն, երբ Աստուած Մովսէսի կը ներշնչէ ասուն տալով Ս. Գրքի առաջին խօսքերը, եւ ապա կ'արտասանէ «Ստեղծենք մարդը». Մովսէս գրիչ ի ձեռին զարմանօք կը նայի առ Տէր. Աստուած Մովսէսի ափշութիւնը տեսնելով կը հրամայէ գրել իւր արտասանած բառը, այլ սակայն Մովսէսի գրիչը անշարժ կը մնայ. Աստուած երբ վերստին կը հրամայէ, Մովսէս սրտայոյզ կը հարցնէ. «Տէր, մինչեւ ցայժմ դու եղակի խօսեցար, եւ արդարեւ դու միայնակ կաս եւ դու միայն ես արարիչ, իսկ այժմ յոգնակի կը խօսիս եւ այն եւս մարդն ստեղծելու ատեն, արդեօք ուրիշներ...» : Տէր Աստուած ընդհատելով Մովսէսի խօսքը կըսէ. «Գրէ դուն,

ինչ որ ես կ'արտասանեմ: Այդ խորհուրդն այսինքն այդ գաղտնիք ապագայ ժամանակի մէջ պիտի յայտնուի»։ — Ի ձեռն Մեսիայի:

«Եւ ստեղծ տէր Աստուած զմարդն հող յերկրէ, եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն հողի կենդանի»:

Տէր Աստուած մարդն աւտօրիկ միւս արարածներու նման չստեղծէր, հողէն կստեղծէ, եւ նորա երեսն ի վեր կը փչէ ⁽¹⁾, իրմէն բան մը կը շնորհէ, որով մարդը կողեւորի:

Ի պատկերի Աստուծոյ արար գնա»:

Տէր Աստուած իւր մարդկային հրաշակերտն օժտելու համար ի նմանութիւն իւր պատկերի կստեղծէ, որպէսզի մարդն իբրեւ պատկեր Աստուծոյ ազատութեամբ ապրի յաւիտեան, արդարութեան օրինօք վայելէ ամէն բան, իմաստութեամբ տիրէ աշխարհի:

«Եւ հանգեալ յաուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց՝ զոր արար: Եւ օրհնեաց Աստուած զօրն եօթներորդ, եւ սրբեաց զնա»:

Ի յիշատակ արարչագործութեան համայն մարդկութիւնն այդ եօթներորդ օրը ՍՈՒՐԲ պիտի պահէր, իբրեւ Աստուծոյ հանգստեան օր, եւ արդարեւ մինչեւ ցայսօր բոլոր հին ու նոր ազգեր, թէ Աստուածապաշտ եւ թէ հեթանոս, թէ բարբարիկ եւ թէ ազնուական, ի սկզբանէ անտի աշխարհի, սուրբ կը պահեն այդ օրը:

«Եւ տնկեաց Աստուած զգրախտն յեղեմ ընդ արեւելս եւ եղ անդ զմարդն, զոր ստեղծ»:

Դրախտի, այսինքն գեղեցկատեսիլ պարտէզի մը մէջ կը դնէ Տէր Աստուած իւր այս գեղեցիկ ձեռագործը, ի նշան իւր գորովագութ սիրոյն, եւ ուղղակի զնա իւր պահպանութեան տակ կ'առնու: Այդ պարտիզին մէջ կային ծառեր «Գեղեցիկ ի տեսանել, եւ քաղցր ի կերակուր», որոց մէջ էին Ծառն կենաց, «Եւ զծառն գիտելոյ զգիտութիւն բարւոյ եւ չարի»:

«Եւ գետ ելանէր յեղեմայ՝ ոռոգանել զգրախտն եւ անտի բաժանի ի չորս առաջ»:

Ս Գիրք դրախտի չորս գետերը թուելով, որք են Եփ-

(1) Ուրիշ ազգաց Աստուածաշունչը կը գրեն «Քթին ծակերէն փչեց»:

րատ, Տիգրիս, Փիսոն եւ Գեհոն, ցոյց կը տայ թէ դրախտն աշխարհիս մէջ բնակելի տեղ մը էր: Եւ որովհետեւ այդ չորս գետեր մեր հայրենի լեռներէն կը բղխին, ուրեմն դրախտն եղած է անդ, եւ այդ դրախտն՝ որ օրինակ էր այն երկնային դրախտին, որոյ դռները բացաւ Քրիստոս, եղծաւ եւ ապականեցաւ, յորմէ հետէ նոյն իսկ մարդն ինքնին եղծաւ, զառածանելով ի մեղս:

Այլ որքան Աստուծոյ խնամքն անհուն էր առ մարդն, սակայն չկամեցաւ Աստուած որ առաջին մարդն անզբաղ տալի, ուստի հրամայեց նմա դրախտը տնտեսել եւ պահել ՎՈՐԾԵԼՈՎ: Ներսէր Շնորհալի կը գրէ. « Եկեղեցւոյ վարդապետներն պէս պէս օրինակներով կը համեմատեն, եւ կը նմանցնեն դրախտն՝ Եկեղեցւոյ, կենաց ծառը Քրիստոսի, գիտութեան ծառը չարին, որմէ փախչիլ եւ բնաւ չհալիլ հրամայուած է»: Դարձեալ. « Աստուծոյ պատուիրանաց միւս տունկերն, որ բարի են, եւ ուսողներու բարեաց պատճառ, ուսելու հրամանն ընդունեցինք, այլ սակայն գործելով եւ պահելով», Դրիգոր Նարեկացի եւս այսպէս կը մեկնէ. «Դրախտն ոչ թէ գործելու եւ պահպանելու պէտքն ունէր, ուր ամէն վայելչութիւն եւ աստուածային պահպանութիւն կար, այլ գործել զարդարութիւն, եւ պահել զպատուիրանն՝ յառաջագոյն վարդապետեաց »:



ԵՂԻՍԷ ՄԱՐԳԱՐԷ

Եղիսէ որդի էր Սափատայ, եւ մինչ կը հերկէր իւր տրտը, Եղիա Մարգարէ իւր մտկեակը նետեց Եղիսէի վրայ, որ անմիջապէս թողլով եգները եւ համբարելէ յետոյ հայրն ու մայրը, Եղեայի ետեւէն գնաց եւ այնուհետեւ ծառայեց նմա: Սա սկսեց իւր սլաշտօնն այն ատեն երբ Եղիա վերացաւ յերկինս: Սա Եղեայի մաշկեկաւը պատուեց Յովղանան գետը եւ հետի անցաւ: Բժշկեց Երիքովի ջուրերը. պատժեց ի Բեթէլ այն տղեկներն, որք ծաղրելով կը կանչուէին առ ինքն. «Ելիւր, կռնո գլուխ, ելիւր», Իսրա-

յեւեան միացեալ բանականներուն առաջնորդեց ի յաղթութիւն ընդդէմ Մովսէսայ, մինչ զի թշնամի բանակին թագաւորն սարսափահար եւ խելայեղ մորթեց իւր անդրանիկ որդին, պարսպին վրայ, իսրայելացւոց աչքին առջեւ. ըսդ այս տեսիլ աղիողորմ սարսափեցաւ յաղթական բանակը, եւ առ գլխոյ չուզեց շարունակել պատերազմը: Եղիսէ այրի կնոջ մը ամանը ձիթով լնլով միսիթարեց կինը եւ փրկեց նորա որդիները ծառայութենէ: Նոյնպէս մարգարէացաւ իւր հիւրասէր տանտիկնոջ, ի Սովմնա, թէ զաւակ պիտի ունենայ մօտ ժամանակէն: Ծնաւ որդին եւ երբ քիչ տարի յետոյ մեռաւ զաւակը, մայրը լալով վազեց ի Կարմեղոս լեռան, ուր կը ձգնէր Եղիսէ, փարեցաւ ոտներուն, եւ կըսէ. «Միթէ խնդրեցի՞ որդի ի տեսուէ իմի՛ն, ո՞չ ասացի մի՛ խաբեր զիս»: Եղիսէ արգահատելով իւր Գեեզի ծառային կը հրամայէ որ երթայ մեռեալ մանկան երեսին վրայ դնէ իւր ցուպը, եւ ինքն եւս երթալով եւ աղօթելով յարոյց մեռեալ մանուկը:

Որդիք մարգարէից, որք թունաւոր կերակուր ուտելէ յետոյ՝ աղաղակեցին. «Մահ է ի սանի աստ, այրդ Աստուծոյ», ազատեցան հրաշիւք Եղիսէի: Նոյնպէս քիչ մը հացով չափեր կշտացուց նման Փրկչին: Հրամանաւ Եղիսէի Նեէման Ասորին Յորդանանի ջրով լուացուելէ յետոյ՝ բժշկեցաւ իւր բորոտութենէն: Ընծայամատոյց եղաւ Ասորին առ Եղիսէ, որ չընդունեց ոսեւէ բան, միայն թէ Գեեզի վազեց Ասորիին ետեւէն եւ խաբելով Ասորի իշխանը թէեւ ընծայներ առաւ, այլ սակայն Եղիսէէն պատժուեցաւ նորա բորոտութեան ախտէն բռնուելով: Ծածկագէտ էր Եղիսէ, եւ արքայն Ասորուց որքան դարանամուտ եղաւ իսրայէլի արքայի, միշտ ի դէրեւ ելան իւր հնարներ: Սամարիա պաշարեցաւ թշնամիներէ, եւ մեծ սով տիրեց հոն, մինչ զի երկու կիներ միաբանելով իրենց մէկ զաւակը մորթեցին ու կերան, բայց որովհետեւ միւս կինը դրժեց իւր դաշին, չուզելով մորթել իւր զաւակը, դատը թագաւորին ներկայացաւ: Մորմոքեցան աղիք թագաւորին եւ սկսաւ գոչել. «Օն եւ օն արասցէ ինձ Աստուած, եւ օն եւ օն յաւեւցէ, եթէ կացցէ գլուխն Եղիսէի որդւոյ Սափատայ ի վերայ նորա այսօր»: Եղիսէ անվեհեր առ թա-

գաւորն գալով, զրուցեց. «Վաղիւ այս ժամ իցէ գրիւ մի նաչհւոյ սկեղ միոյ, եւ երկու գրիւք գարւոյ սկեղ միոյ ի գրունս Սամարիայ»: Թագաւորին թիկնապահն զարմացմամբ գոչեց. «Եթէ սահանս յերկինս արասցէ Տէր, միթէ լինիցի՞ բանդ այդ»: Կը պատասխանէ Եղիսէ. «Աչօքդ պիտի տեսնես. բայց պիտի չուտես»: Արդարեւ յաջորդ օրն Ասորիք խուճապելով ձգեցին զինւորական ամէն կահ ու կարասի եւ անասուն եւ փախան, եւ թիկնապահն ի խուան ժողովրդեան կոխոտուելով մեռաւ: Լալով մարգարէացաւ Ազայելի թէ պիտի թագաւորէ Ասորւոց եւ շատ վիշտ պիտի պատճառէ Իսրայելի, այսինքն կոտորած: Հրամանաւ Եղիսէի Յէու թագաւոր օծուելով սպաննեց Յովրամը, եւ Յեզարէլ ըստ անիծիցն Եղիայի պալատան պատուհանէն վար ձգուելով՝ չուներու կերակուր եղաւ:

Հիւանդացաւ Եղիսէ, եւ Յովսա թագաւոր լացաւ հեծկլտալով. «Հայր, հայր, կա՛ռքդ Իսրայելի եւ հեծեալք նորա»: Եղիսէ գորովելով կը պատասխանէ. «Առ աղեղդ եւ դէպի արեւելք նշան առ»: Թագաւորն երեք անգամ լարեց աղեղը եւ նետեց եւ ապա կանկ առաւ: Տրտմեցաւ Եղիսէ ըսելով. «Եթէ հինգ կամ վեց անգամ նետէիր բոլորովին պիտի ջախջախէիր Ասորիները»: Մեռաւ Եղիսէ, այլ սակայն իւր մարմինն իսկ բժշկութիւն եղաւ այն մեռելին, զոր գողէրը ձգեցին իւր գերեզմանին վրայ, ահա այսպէս Տէրը հաստատեց թէ սրբոց մարմինք եւս հրաշագործ են. աղանդաւորք՝ որք կը մերժեն սրբոց մարմիններու հրաշալի զօրութիւնը, կը պապանծին այս մեծ հրաշքի առջեւ:

Ս Ո Ւ Ա Կ

ԲԱԳՈՍ, ՄԱՐԿՈՍ, ԹՈՐՈՍ

Ուղտին անունն էր Բագոս,
Աղուեսուկին էլ Թորոս,
Եւ Գայլին Մարկոս:

Իսկ երեքին էր կնքահար
 Խելօք Խիկար :
 Սոցա սէրն ի սկզբան
 Կարի իմն աննրման :
 Բայց փորին շահ . — այդ էր գէշը .
 Սէր կը թողո՞ւ փորին ձայնը :
 Երբ կը գտնեն յանկարծ մի օր
 Լաւաշ հացի խոշոր կըտոր ,
 Երեքն եւս անօթի են ,
 Ուստի ի՞նչ ընեն .
 Կը միաբանին
 Որ տարիքով էն մեծին
 Հացն ըլլայ բաժին :
 Սեւ օր գլխիս , երգում էլ կընեն ,
 Որ մէկմէկու երբեք չը ստեն .
 Գայլն յառաջեց . թէ Ադամէն
 Ծեծ եմ կերած անգըթօրէն .
 Որուն իսկոյն Աղուէս
 Անխռով պատասխանեց .
 «Անանկ է նէ , թողանս ընկերներէն ես» :
 Ուղտն ի՞նչ ընէ . կռահեց խորամանկը
 Լարուած գաւը ,
 Ուստի շուտ հացն ի բերան տանելով ,
 «Իմ տարիքս սա ոտներուս նայելով ,
 Զափեցէք ,
 Հասկըցէք » :
 Ուղտի այս խօսքէն Գայլ կատղած խիստ բարկացած՝
 Վեր վեր կը ցատկէ , որ սռնու զայն խոշոր հաց .
 Սակայն վերջապէս Ուղտի ծնկաց մէջ
 Կը ճզմի գլուխը , հանելով ձայն գէշ :
 Իսկ ծափ Աղուէս կը գարնէ .
 Պարէ ուրախ եւ կերգէ .
 « Բարձր է Բագոս .
 Կզկնձայ Մարկոս ,
 Շուրջ գայ թորոս » :

Ա Զ Դ

Խօսնակի 1. 2. 5 թիւերն սպառած լինելով՝ վերատրպուած են :

Խօսնակի մինչեւ 13 թիւի ելեւմուտքն խմբագրութեանս վերաբերելուն համար, բաժանորդագինն որ է 10 ղրշ. խմբագրութեանս պիտի վճարուի, եւ որ պիտի վճարէ, որոց տարեկան բաժանորդագինն կանխիկ ստացած է :

Սոխակ Խօսնակի շարունակութիւնը չէ, եւ չպիտի յղուի նոցա, որք Խօսնակի հաշիւը մաքրած չեն :

Սոխակի քառամսեայն 10 ղրշ. է եւ գաւառաց համար կանխիկ :

Գիւղացի քահանայից համար տարեկան բաժանորդագինն է 10 ղրշ. եւ պիտի յղուի տեղւոյն Սոխակի գործակալին, եթէ վճարումը կանխիկ եղած է :

ՍՈՒՆԱԿ Կը հրատարակուի ամէն Շաբաթ օր :

Տարեկան զինն է 30 դրու. **Նաւամսեայն** 10 դրու. **Հասր** 20 փոյ :

Գիւղացի քահանայից **Տարեկան** բաժանորդագինն է 10 դրու :

Վճարմունք կանխիկ են, դրօշմարուղք եւս կ'ընդունուի :

Հանդիսիս վերաբերեալ գրութիւնք ուղղել. Առ

Տէր եւ Խմբագիր Սոխակ Հանդիսի

Վ.Ա.ՀԱՆ Վ. ՏԷՐ ՄԻՆԱՍՍԱՆ

Ի ԳՈՒՄԳԱԲՈՒ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԵԱՆ

Զամագնքլար, Յակոբեան խան, Թիւ 10, 11, 12, 13

1888

معرف عمومیه نظارت جلیله سنک رخصتیه طبع اوله شد